

## Հայտ ներկայացնելու հրավեր

<b>Ամսաթիվ</b>	30 սեպտեմբեր 2015թ.
<b>Վարկի համարը և անվանումը</b>	2993-ARM: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր- Տրանշ 3
<b>Պայմանագրի համարը և անվանումը</b>	T3-CW-03: Հյուսիս-Հարավ ճանապարհի 9 ուղեանցերի և 1 կամրջի վերակառուցում/ կառուցում/ վերականգնում (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ):
<b>Հայտերի ներկայացման վերջնաժամկետը</b>	16 նոյեմբեր 2015թ., 15:00 (Երևանի ժամով)

- Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի համար, և մտադիր է օգտագործել այդ վարկի մի մասը վերոնշյալ պայմանագրի ներքո վճարումները կատարելու համար:
  - Այժմ Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ Գործատու) հրավիրում է իրավասու հայտատուներին ներկայացնելու մրցութային հայտերով փակ ծրարներ հետևյալ աշխատանքների համար՝
    - «9 ուղեանցերի և 1 կամրջի շինարարական աշխատանքներ (6 ուղեանցերի վերակառուցման, 2 ուղեանցերի կառուցման, 1 ուղեանցի վերականգնողական և 1 կամրջի վերականգնողական աշխատանքներ («Աշխատանքներ») Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներում», որոնք բաժանված են 10 չափաբաժիններից՝
    - Չափաբաժին 1. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 10+943կմ-ում (Երևան-Արտաշատ)
    - Չափաբաժին 2. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 13+029կմ-ում (Երևան-Արտաշատ)
    - Չափաբաժին 3. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 21+800կմ-ում (Երևան-Արտաշատ)
    - Չափաբաժին 4. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 22+850կմ-ում (Երևան-Արտաշատ)
    - Չափաբաժին 5. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 25+630կմ-ում (Երևան-Արտաշատ)
    - Չափաբաժին 6. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 28+900կմ-ում (Երևան-Արտաշատ)
    - Չափաբաժին 7. Ուղեանցի վերականգնում Մ1 Հյուսիս-հարավ ճանապարհի 21+550կմ-ում (Երևան-Աշտարակ)
    - Չափաբաժին 8. Ուղեանցի վերականգնում Մ1 Հյուսիս-հարավ ճանապարհի 23+686կմ-ում (Երևան-Աշտարակ)
    - Չափաբաժին 9. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 15+444կմ-ում (Երևան-Արտաշատ)
    - Չափաբաժին 10. Ուղեանցի վերակառուցում Մ2 Հյուսիս-հարավ ճանապարհի 24+147.5կմ-ում (Երևան-Արտաշատ)
- Թվով վեց ուղեանցների վերակառուցումը, որոնք հանդիսանում են տրանսպորտային հանգույցների ուղեանցեր, նախատեսում է հետևյալ հիմնական աշխատանքները՝ գոյություն ունեցող ուղեանցների կազմատում, միջանկյալ և եզրային հենարանների, թոփջքային կառուցվածքների կառուցում երկաթբետոնից, մայթերի և երթևեկելի մասի կառուցում, մոտեցնող ճանապարհների վերակառուցում: Տվյալ ուղեանցների սխեմաներն են 15+2x21+15 անխզելի շրջանակային համակարգեր, իսկ զաբարիտները 9.0մ+2x0.85մ (կմ 10+943), 12.8մ+2x0.75մ (կմ 13+029), 18.8մ+2x0.75մ (կմ 21+800), 6.8մ+2x0.75մ (կմ 22+850), 9.2մ+2x0.75մ (կմ 25+630), 15.9մ+2x1.0մ (կմ 28+900): Մոտեցնող ճանապարհների ծածկը նախատեսված է ասֆալտաբետոնե:

Թվով երկու նոր ուղեանցների կառուցումը նախատեսում է հետևյալ հիմնական աշխատանքները՝ միջանկյալ և եզրային հենարանների, թռիչքային կառուցվածքների կառուցում երկաթբետոնից, մայթերի և երթևեկելի մասի կառուցում, մոտեցնող ճանապարհների վերակառուցում: Տվյալ ուղեանցների սխեմաներն են 15+2x21+15 անխզելի շրջանակային համակարգեր, իսկ գաբարիտները 100մ+2x1.0մ (կմ 15+444), 8.0մ+2x0.75մ (կմ 24+147.5): Մոտեցնող ճանապարհների ծածկը նախատեսված է ասֆալտաբետոնե: ԿՄ 15+444-ի ուղեանցի կառուցման հետ նախատեսվում է նաև տրանսպորտային հանգույցի կառուցում՝ համապատասխան թևերով:

Թվով մեկ ուղեանցի վերականգնումը նախատեսում է հետևյալ հիմնական աշխատանքները՝ միջանկյալ և եզրային հենարանների, թռիչքային կառուցվածքների նորոգում, մայթերի և երթևեկելի մասի նորոգում: Տվյալ ուղեանցի սխեման է 2x18մ, իսկ գաբարիտները 7.5մ (կմ 21+550):

Թվով մեկ կամուրջի վերականգնումը նախատեսում է հետևյալ հիմնական աշխատանքները՝ մետաղական թռիչքային կառուցվածքների միջանկյալ սյուներ՝ ուժեղացված, հավաքովի խիտ լայնական շերտերով երկաթբետոնե բլոկներով, որոնք հանդիսանում են կամրջի յուրահատուկ էլեմենտներ (կմ 23+686):

Նախագիծը նախատեսում է հետևյալը՝

- Երթևեկելի մասի կառուցվածքի հիմնանորոգում, մակերեսային կրող շերտի մշակում և պաշտպանություն մթնոլորտային ազդեցություններից:
- Գոյություն ունեցող ծածկի հեռացում, օրթոտրոպիկ սալերում ջրահեռացման խողովակների տեղադրման նպատակով անցքերի փորում, լայնական ջրահեռացման շերտի կարգավորում մինչև հեծան 1 –ի դեֆորմացիոն կարը:
- Ավազաշթային եղանակով սյուների կորոզիայի ենթարկված մասերի մաքրում և սյուների էլեմենտների ներկում:
- Հեծան 1,2,3 և 4-ի մակերևութային շերտի վերանորոգում և ներկում ճակատային ակրիլային հիմքով ներկով:

Համաձայն նախագծի, աշխատանքները պետք է իրականացվեն 2 փուլով, յուրաքանչյուր թռիչքին համապատասխան: Յուրաքանչյուր թռիչքի վրա աշխատանքների իրականացման ընթացքում վերջինիս վրա երթևեկությունը կդադարեցվի, միաժամանակ մյուս թռիչքում երթևեկության 2 գոտին կվերակազմակերպվի մեկական գոտի յուրաքանչյուր ուղղությամբ:

Սյուների վերանորոգման աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան երթևեկելի մասերի վերանորոգման աշխատանքների ընթացքում: Օժանդակ կառուցվածքների վերանորոգումը պետք է ընդգրկվի միջանկյալ սյուների վերանորոգման աշխատանքների մեջ:

3. Միջազգային բաց մրցույթը (ICB) կիրականացվի **ԱԶԲ-ի մեկ փուլ-երկու ծրար** մրցութային ընթացակարգի համաձայն և մրցույթը բաց է ԱԶԲ-ի իրավասու բոլոր երկրների համար, ինչպես նկարագրված է Մրցութային Փաստաթղթերում:
4. Հայտատուները պետք է ունենան հետևյալ հիմնական որակավորումները՝

Չափաբաժին No.	<b>Տարեկան շինարարության միջին շրջանառություն</b> (վերջին հինգ տարիների ընթացքում) (ԱՄՆ դոլար)	<b>Նմանատիպ Պայմանագրերի արժեքը</b> (վերջին տասը տարիների ընթացքում) (ԱՄՆ դոլար)	<b>Փորձառություն հիմնական գործառնությունների գծով</b> (վերջին տաս տարվա որևէ տարիների ընթացքում)		
			Տեղում բետոն (խորանարդ/մետր )	Ասֆալտ բետոն (քառակուսի/մետր)	Հիմքի շերտ (խորանարդ/մետր)
1	720,000	432,000	510	5,000	310
2	1,058,700	635,200	930	10,200	680
3	1,252,000	751,200	1.080	4,700	320
4	670,700	402,400	490	1,000	500
5	773,400	464,000	700	1,350	500

6	1,200,000	720,000	880	5,000	450
7	136,000	81,600	880	500	-
8	890,700	534,400	-	3,820	-
9	1,333,000	799,800	810	12,500	900
10	1,224,000	734,400	635	6,500	440

5. Մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու և/կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար հայտատուները կարող են դիմել՝

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

Հասցե՝ Պուշկինի 58

Քաղաք՝ Երևան

Փոստային ինդեքս՝ 0002

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս՝ +374-60 50 68 70

Էլեկտրոնային հասցե՝ info@northsouth.am

6. Մրցութային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը (ներառյալ՝ գծագրերը, նախագծի մասնագրերը և ծավալի ամփոփագրերը) անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ից (Շահառու) սկսած 2015թ սեպտեմբերի 29-ից: Մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն աշխատանքային ժամերի ընթացքում՝ ժամը 9:00-ից մինչև 17:00, ստորև նշված հասցեով գրավոր դիմումի ներկայացման դեպքում և վճարելով չփոխհատուցվող գումար՝ ՀԱՐՅՈՒՐ ԱՄՆ ԴՈՒԱՐ (100) ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ (50,000) ՀՀ դրամի չափով, և այդ վճարման հանձնարարագիրը: Վճարումը պետք է կատարվի յուրաքանչյուր Պայմանագրի փաստաթղթերի համար: Վճարման եղանակը՝ բանկային փոխանցում Շահառուի հետևյալ բանկային հաշվին:

For AMD transfers within Armenia	For USD transfer from outside of Armenia
<p>Bank: Araratbank OJSC Addr: 19 Pushkin Street, Yerevan, Armenia</p> <p>Beneficiary account: 1510009017860500</p> <p>Beneficiary: “Organization for Implementation of North-South Road Corridor Investment Program” SNCO Tax Payer Code: 027089 21 Yerevan, Nalbandyan 28</p>	<p>Correspondent Bank: Standard Chartered Bank, New York, USA, Addr: One Madison Avenue, New York, N.Y.10010-3603, SWIFT: SCBLUS33. Routing No 026002561</p> <p>Beneficiary's Bank: Araratbank OJSC, Addr: 19 Pushkin Street, Yerevan, Armenia; Account no: 1510009017860301 SWIFT: ARMCAM22; IBAN: 3582023571001</p> <p>Beneficiary: “Organization for Implementation of North-South Road Corridor Investment Program” SNCO;</p> <p>or</p> <p>Correspondent Bank: CitiBank N.A., 111 Wall Street, New York, NY, 10043, SWIFT: CITIUS33</p> <p>Beneficiary's Bank: Araratbank OJSC, Addr: 19 Pushkin Street, Yerevan, Armenia;</p>

	<p>Account no: 1510009017860301  SWIFT: ARMCAM22;  IBAN: 36254774</p> <p>Beneficiary:  “Organization for Implementation of North-South Road Corridor Investment Program” SNCO;</p> <p style="text-align: center;">or</p> <p>Correspondent Bank:  Raiffeisen Zentralbank Oesterreich AG,  SWIFT: RZBAATWW</p> <p>Beneficiary's Bank:  Araratbank OJSC, Addr: 19 Pushkin Street, Yerevan, Armenia;  Account no: 1510009017860301  SWIFT: ARMCAM22;  IBAN: 070-55.076.558 USD</p> <p>Beneficiary:  “Organization for Implementation of North-South Road Corridor Investment Program” SNCO</p>
--	--

7. Գործատուն պատասխանատու չէ հայտատուի կողմից հայտի պատրաստման կամ ներկայացման համար կատարված ծախսերի համար:
8. Նախամրցութային կոնֆերանսը տեղի կունենա **26 հոկտեմբեր 2015թ.-ին, ժամը՝ 15:00 - ին** ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հանդիպումների սենյակում:  
Գործատուն **27 հոկտեմբեր 2015թ.** կկազմակերպի շինհրապարակի այցելություն: Գործատուն առաջարկում է մրցութային փաստաթղթեր ձեռք բերած բոլոր պոտենցիալ հայտատուներին մասնակցել նախամրցութային կոնֆերանսին:
9. Մրցութային փաստաթղթերը պետք է ներկայացվեն
  - «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ –ի հասցեով
  - մինչև 2015թ. նոյեմբերի **16-ը, ժամը՝ 15:00 (Երևանի ժամով)**
  - հայտի ապահովման հետ միասին, ինչպես նկարագրված է Մրցութային Փաստաթղթերում:
10. Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն **անմիջապես վերջնաժամկետից հետո**, հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել հայտերի բացմանը հետևյալ հասցեով՝

Հանդիպումների սենյակ, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն  
Հասցե՝ Նալբանդյան 58  
Քաղաք՝ Երևան  
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Հայտ ներկայացնելու հրավերը հրապարակվել է նաև ԱԶԲ-ի կողմից և այն կարող եք գտնել հետևյալ հղումով՝ <http://www.adb.org/sites/default/files/coso/arm2993-T3CW03.pdf>